

51. — Եւ թէ նոյն իսկ երկկրդի երկաթաձայլ ըլլային
 Եւ կամ թ' ազամանդեայ անթափանց այս պարիսպներս,
 Հոն ներսն ազաւհով միթէ գրծիեմն այն Արզանս
 Ձեր հուճկու զօրութենէն պիտի կըրնամք պահուարիլ.
 Օ'ն երթանք յարձըկինք: Եւ այս խօսքերս ըսելով՝
 Պարբսպաց կողմը պիմեց ինքն ամենէն նախընթաց.
 Չի կառպին իւր անվեհեր՝ ամենեւին վախ չունի
 Քարերու կարկուտներէն կամ սլաքաց շաղբ տարափէ:
52. — Եւ ես ցընցելով զլուին իւր՝ ղէպ ի վեր կը գարձնէ
 Երեսն՝ այնքան սոսկալի քաջայանդուղին տեսեամբ,
 Որ մինչեւ իսկ պատերէն անպին կեցած պաշտպանողք
 Սրբաբերնուն մէջ անսովոր վախի սարսուռ մը կը զգան:
 Մինչդեռ նա ոմանց խրախոյս կու տայ, ոչլոց կը սպաննայ,
 Իւր աշխոյժը նրաճող մէկն ահա վրայ կը հասնի.
 Ազնուասիրտն է Սիգիեր, զոր կ'ուղարկէ Հոն Կոփրեա
 Վեհազայն իւր հրամանաց պատգամաբեր անաչառ:
53. — Նոր՝ անուամբ կը կըշտամբէ սա շափազանց հոանպինն,
 Եւ շուտով կը ստիպէ անպատճառ ես դռնալու.
 Գարձէք, ձայն կու տար, գարձէք, վասն զի ձեր բարկութեան
 Անյամբը է գիրք տեղւոյն և ժամանակն անպան.
 Այսպէս իմ բերնովս կը հրամայէ ձեզ Կոփրեա:
 Այս լուրին վրայ մէկէն Հոնալբ ինքզինք կը ստնձէ,
 Որ խրախոյս կու տար այլոց, թէպէտ որտալն կը մտնչէ,
 Եւ զըսուանց ալ նըշաններ ցոյց տայ անզուսպ զայրութին:
54. — Ես գարձան ջոկատներն, և վերադարձն այն իրենց՝
 Չըկրեց բնաւ խանդարումըն թըշնամեաց կողմանէ:
 Այլ և ոչ իսկ փոքրիկ մասամբ մ'յետին պաշամուռքէն
 Քաջին Գուգոնի մարմինը զուրկ թողուեցաւ.
 Այլ գրթոտ և խնամարկու բազուկներնուն վրայ բարձած՝
 Մըտերիմքն իւր՝ բերին բռնն այն պատուաւոր և զոզարիկ:

ՏԱՍՍՈՅ. Ազատումն նրոստղիմբ. (երգ 9-).

Թարգմ. Հ. Ա. ՏԻՐՈՅԵԱՆ



ՄԵՌԵԼՈՅ ՕՐԸ

ԳԵՐԵՋՄԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՌՋԵՒ

(ՆՈՅՄԵՐԸ 2)

Առաջին անգամն է որ Մեհելոց օրը՝ պիտի այցելեմ վենեակոյ գերեզմանաստունը, մեռելներու կզկին Ս. Միքայէլ:

Ճանապարհիս վրայ, պատուհաններու առջև գրուած ծաղիկները՝ աշնան ցուրտ

ցօյին տակ զլուինին կախած են, իրրեւ թէ խորհէին՝ ո՞ր ձեռք պիտի գայ արդեօք զիրենք կտրելու, նետելու համար իր սիրելւոյն գերեզմանին վրայ, և որոնք պիտի կենան հոն իրրեւ վկայ անկեղծ սիրոյ, և պիտի պատկերեն զաղափարական սիրահետ շղթայ մը՝ երկու որսերու մէջ, մեռածին ու ապրողին:

Երէկուան նոյն զանգակներն են՝ որ կը հնչեն, բայց այսօր անոնք ախար շեշտ մ'ուսնին, այդ հարիւրաւոր զանգակներու ձայնը՝

մեռելներու աշխարհէն կու գայ՝ Աղօթքի կանչելու, և որ հոգիներու լալկան հառաչներու շափ տխուր է:

Սարսուռով մը ամփոփուած՝ գերեզմանաւանդուն կը դիմեմ: Վիճեակեան ազամոզ ճանապարհներուն մէջէն՝ գերեզմանի ուղին գրասնկը շատ դիւրին է այսօր. այդ տխուր ճամբայն՝ այսօր՝ ծաղիկներով, արցունքներով և սեւով գծուած է:

Շտապելով առաջ կ'անցնի ինձմէ՝ փոքրիկ սուղ մը՝ որ ծանր պակ կ'ընտանայ յոյսուածքան կը տանի. եւ թէև սրցունք ունի աչքին մէջ, բայց խիղճ մ'աւ սրտին վրայ կայ. ձեռքի պակար եղբորը գերեզմանին վրայ պիտի գնէ:

Դիմացս կ'ելլեն սեւազգեստ կանայք և օրփորդներ, որոնք ապահովապէս գերեզմանառանէն կը գտնան. արցունքը որ գետնէ չորացած անոնց աչքերուն մէջ՝ կը մատնէ զերեսը: Ասանք կանխած են բան առատեան ցուրտ ցօղը՝ իրենց սիրելոյն գերեզմանները սիրատուր արցունքներով թրջելու:

Քրտան վայրկեանի ճանապարհը շատով կ'անցնի. և հիմայ գերեզմանոցը դիմացս է, կզգիի մը մէջ: Վիճեակայ այդ քնացոյզ կզգին Ս. Միքայել՝ այսօր արթնցած է կարծես:

Յատկապէս նոյն օրուան համար արուեստակերտուած առժամանակեայ մեծ կամուրջ մը՝ լայն և երկայն՝ ձգուած է վիճեակէն դէպ ի այդ կզգին. կեանքէն դէպ ի մահը, որ միշտ ծածկուած է անցնողներով:

Չեմ գիտեր, հիմայ արդեօք ո՞րքան կ'ընկճի այդ անզգայ կապը՝ անցորդներու տխուր մտածումներու տակ. հազարաւոր զգացումներ, հազարաւոր արցունքի կաթիլներ կը թողան հոն՝ հայր կամ որդին, հարուր կամ մայրը, ջուրը կամ եղբայրը: Վերջապէս այսօր բարեպաշտին Աէն է՝ կամուրջի փոխուած՝ քաղաքէն դէպ ի գերեզման:

Այս սրբազանուած կամուրջէն, կ'անցնիմ. և գերեզմանոցին Սիմին վրայ եմ: Կեանքի ամենէն սեւ անցքն է առ, զոր Ստեղծողը՝ օրօրոցքին հետ առաւ: Ամէն մարդ ստիպուած է անցնիլ ասկից, թօթուած՝ քայլ մը միայն փոխելով օրօցքէն դէպ ի հոս, կեանքէն դէպ ի մահ:

*

Աշխարհը իր վայելքներով, իր փառքերով կ'ոչընչանայ ասկէց անդին. լոյսը կը խաւարի . . .

Ո՛վ տխուր անցք, բանինք կան՝ որոնք կը ջանան հետու ձեռք քեզմէ՝ երբ բնութեան աջ կը հրէ զիրենք դէպ ի քեզ. և քանի՞նք ալ՝ քեզմէ անդին յուսալով կեանք մը անվիշա՝ արագարար քեզի կը վազին՝ վերջ տալու օրուան ցուերուն:

Այս սեմին սուղին է հեղեղը արիւնի, թափուած անձանթի դարերէ ի վեր . . . Իսկ անդին՝ հեղեղը արցունքի, բղիւծ՝ սիրողներու աչքերէն: Այս սեմին դուրս թողուած են փառք ու պակ՝ զորս մարդիկ շահեցան աշխարհի վրայ: Այս սեմին վրայ է Հեթումնոսին Քարանը ու Քրիստոսնէն Ս. Միքայէլը՝ որոնք անցորդին կ'ընեն միշտ. « կեցիք, կեցիք հոս վայրկեան մը, ո՛վ մարդ. հոս դիր այն ամէն ինչ՝ որ դուրս է մերկութենէդ »:

Աղեքսանդրը հոս թողած է այն սուրբ՝ որուն զմաց ամբողջ մարդկութիւնը դողզացաց. նա անցաւ ասկից ճիշդ այնպէս՝ ինչպէս ամիս մ'առաջ գերիները իր սրտն ստակէն՝ կծկուած և ձեւնամած:

Հոս թողած է Համբոս այն գարնեպսակը՝ որ փառքերու խաղաղութիւն էր, տրուած իրեն՝ փոխարէն իշխականի:

Կարուկան՝ որ ձեռքին վրայ աշխարհներ խաղաց, որ փառքերով շալլուած՝ արիւնոտած ուղեբերով անցաւ անթիւ Յաղթական կամարներու ներքեւէ, այս սեմին շիրցաւ անցնիլ արբայական ծիրանիով:

Ասկից անցաւ նաեւ Շէշքարի, փառքերուն վրայ նետելով այն սիրական գրիշը՝ որ վրձինն եղաւ իր հանճարեղ միաբար գրքերու մէջ նկարելու:

Ասկից անցան նաեւ ամէն թշուառները. մուրացիկը՝ թազաւորին հետեւէն, հոս, սեմին դուրս թողալով իրենց կեանքին փուշերը:

Ասկից անցան և անոնք՝ որ կեղեքեցին թշուառները, կսիւեցին տկարին վրայ՝ բարձրանալու համար փառքի կատարին վրայ, իրենց անիրաւ փառքին խաւարումը անանելով վերջին վայրկեանը:

Հոս կը թողու վերջապէս կեղեքիչն այն

ուկինները՝ որոնք աշխատող մարդան ըրտինքին հետ գետակն կ'իյնային, և ան իր ուժին իրաւունքով յափշտակից զանանք:

*

Ս. Միքայէլ գերեզմանատան սեմին վրայ՝ մաքիս մէջ նկարուեցաւ աշխարհի գերեզմանատան դարաւոր սեմը, ու ես անոր հետ զբարձած՝ անդիտակից քայլերս կը փոփոխէի. և զիս եկեղեցոյն մէջ գտայ:

Ժողովրդեան մաս մ'աւանդատուն կը մըսնէր. երբ հոն էի՝ պառաւ մը, որուն սպիտակ մագերէ, խորշոմնած դէմքը և չորցած ձեռքերը ու գաւազանը՝ որուն վրայ կ'որ յեցած էր, գուշակեւ կու տային թէ ութսուն տարիներ անսած է ան. քառասունը գարունի նման և միւս քառասունը ձմարն նման ցուրտ: Պառաւը պաշտօնեային մօտեցաւ. և թաշկինակին մէջ ծրարած գրամները հանելով՝ համրեց ասեղիմը ասեղիմին վրայ գնելով՝ որունք անշուշտ մուրալով ժողոված էր — երկու ֆրանք ամբողջացուց. սակն անդամ վերցնելուն ու գնելուն՝ դողողացող ձեռքին վրայ ութսուն սարուան աչքերէն արցունքներ կը քամէր. « Պատարազ մը ըսէք իմ բոլոր մեծահններու համար » բառ ան, ու զգէ ի գերեզման գնաց: Քիչ վերջ եօթ-ութ տարեկան տղայ մը՝ մոմ մը երկընցոյ ժամկոչին, և մանկակտն շեշտով ըսաւ. « Խորանին վրայ վառէ սա, կըջորս հողոյն համար. մայրիկս սուտաւ »:

Հիմայ գերեզմանոցին մէջ կը շրջիմ. ինծի առաջին անգամ դամբան մը կը ցուցնեն՝ որուն մէջ աշխարհածանօթ մը կը հանդիս, վակնէր. սա կարծես իր միաքը ու սիրաը մարդոց հաճոյքին համար մաշեցուց փոխաբէն գերեզմանի մը. . . Ամբողջ աշխարհը չէ կարող ուրիշ կերպով վարձատրել այդ մեծ մարդը՝ բայց միայն ափ մը հող տալով այս կողոյն մէջ՝ ուր կարեմաւ հանդիցնէ իր սաղանդաւոր գլուխը:

— « Հոս ինչ տալանդներ կը հանդիսին » կ'ըսեն ինծի. բայց նոյն վայրկեանին՝ անարժէք մարդու մը ձայնը կու գայ ականջին նոյն հողին սակէն՝ որ կ'ըսէ. « Ես ալ հոս կը հանդիսիմ »:

Արձանները՝ որ հարուստներու վրայ կը

բարձրանան, իբրև խորհրտայ քարացած որցունքներ, այնքան չեն գրաւեր իմ միտքս՝ որքան համեստ ապրած աղքատի մը գերեզմանը, որուն վրայ բաւ է որ ծաղիկ մը բացուած բլլայ և արցունք մը քամուած:

Հոս, այս ընդարձակ գերեզմանին մէջ՝ լուսթիւն մը, մեծները չվրովելու չափ լուսթիւն մը կայ. Ժողիւր աքորուած է ասկից այն օրէն ի վեր՝ երբ առաջին անգամ մարդ մը իր սիրելին թաղեց հոս:

Կը թուի՝ որ հոս բացուած ծաղիկները ինտում տեսած չեն երբէք. և դարաւոր նոճիները՝ արցունքներու մէջ բուսած՝ արցունքներու մէջ ալ պիտի չըրնան:

Երբոր նոճիներով զծուած ճանապարհը կ'անցնիմ՝ կը հանդիպիմ՝ գերեզմաններու՝ որոնք թարմ են գեռ, որոնց վրայ գեռ կանանչը չէ գոցած. ասոնց շատերուն մէջ կը հոնգչին անանք՝ որոնք տարի մը կամ ամիս մ'առաջ հոս այցելեցին. և ո՞վ գիտէ այժմ ալ ինչ հետ այցելողներէն՝ քիչ օրեր վերջ որոնք պիտի գան հանգչելու հոս:

Կը շարունակեմ սիրուր ճանապարհս. կեանքի նման՝ առջեւ ելլող գերեզմաններն ալ՝ իրենց արտաքինով կը փոփոխուին միշտ. կրկեմ կը հանդիպի արձաններով զարդարուած դամբաններու խումբ մը, որոնք Հին հարուստ գերեզմանի մը անցեալը կ'ուզեն պատմել. բայց ասանց, շատնոց ի վեր սասոնց վրայ արցունք չէ ընկած. կրկեմ ալ կը հանդիպին աղքատներու գերեզմաններ, որոնց քով ազօթողներ կան: Արդեօք անզգայ քարերով, զորս արցունքներու անդ փոխանակած են կեղծ սրտերը, անմահ պիտի մնան այս մարդոց անունները: Աւելի լաւ չէ սիրոյ արաստուքի կաթիլ մը՝ հողէ դամբանի մը վրայ, քան շքեղ արձան մը՝ որ միայն անձրեռով պիտի թըջի:

Շատ գերեզմաններու քով ազօթողներ կը տեսնեմ. միակ լուսին՝ սրով ապրողը կը խօսի հանդուղին հետ: Կին մը ծնրազիր կանանչներու մէջ՝ պլզլացող լոյսի մը քով կ'աղօթէ. միակ օրն է՝ որ նա լսելու կու գայ իր սիրելի էրկանը. « Ես ալ գերեզման մտած եմ՝ քեզի հետ »:

Քիչ մ'անպին՝ մայր մը, փոքրիկ գերեզ-

մանի մը քով վարդարանի աղօթքը կը մրմնջէ. իր ամէն մէկ Ողջոյնին՝ արտասուք մը կը ձգէ իր անդրանիկ որդւոյն վրայ, որուն ճակատին տուաւ իր մայրական անգրանիկ համբոյրը՝ ուրախութեան արցունքով:

Մտադիւայ պսակով մը քովէն կ'անցնի փոքրիկ աղջիկ մը. դեռ առաջին անգամն է որ նա հոս կու գայ, ինչպէս մայրը բռած է՝ դայն նուիրելու իր հայրիկին՝ որուն մահը պինքը լացուցած չէր: — « Մայրիկ, կ'ըտէ ան, ո՞ր է հայրիկս », հարցում մը անսկզբ՝ ուրախութեան շնչովով. — « Քիչ մ'ալ յառաջ ». և մայրը փոխանակ հայրիկին՝ հոգէ կոյտի մը վրայ արտասուելով կ'ըտէ. — « Պսակը հոս դիր, հոս է հայրիկդ »: Փոքրիկը հիմայ կը զգայ ցար՝ որ իր կեանքին հետ պիտի ապրի. ամէն անգամ երբ ընկերներուն բերնէն այդ « հայրիկ »ը լսէ իր անսկզբ աչքերուն մէջ պիտի նկարտի այդ տխուր հոգակոյտը:

Անդին աղքատ ծերունի մ'ալ ուրիշ վիշտով մը կ'երեքէ զուշիւր. նա ամէն տարի իր մեռած կնոջ տապանաբար մը խոստանալու միայն կու գայ:

Ասոր կից պատանի մը երկու գերեզմաններու մէջ՝ մօրմէն ոտքած աղօթքներ կը կրկնէ. մէկ կողմը հայրը թաղուած է, միւս կողմը մայրը՝ որ քիչ օր առաջ զինքը սրբ ձգեց: Աղքատ է ան, չէ կրցած ծաղիկ բերել, և կը յուսայ՝ թէ իր արցունքները մօրը գերեզմանին վրայ ալ խոտ պիտի բուսցնեն:

Մայր մը գեանի վրայ ընկած՝ սրբան կ'աշխատի սեւ հողը ծաղիկներով զոցելու. և իր որդին՝ կը ջանայ վեր բռնել այն կուրանները՝ որոնք աստղերուն առաւօտեան ծանր արցունքին տակ կ'ախ ընկած են:

Ահա քով սեղու գերեզմաններ իրարու կից, որոնք ո՛չ օր կը մօտենայ, մէկը պղտիկ է, վայրի խոտերով ծածկուած. միւսը դեռ թճրմ. փոքրիկին զխոտն վերեւ կ'անթոյն մը կ'ախուած է, չոր վարպենիի մը ճիւղէն՝ և կուրծքին վրայ փունջ մը ծաղիկ մզրտած. — Մ'օր սիրտ մը ծաղկեայ՝ ցամբած: — Մի՛թէ այդ չորցած փունջը չէ՞ բերած տարի մ'առաջ այն մայրը՝ որ հիմայ որդւոյն կից կը հանդի. և այս անգամ ալ՝ ինք:

զինքը բերած է իրբեւ պսակ մը՝ փոխանակ ծաղկին՝ որ չորցաւ և չկրցաւ մայրական սրտին պատկերն ըլլալ:

Աղքատ աղայ մը, զվերաց ու բուսիկ, կը վազէ հոս ու հոն՝ իր հօրը գերեզմանը փնտռելու. ան ջերմ արցունքներ միայն կրցած է բերել իր սիրելի հօր, և աղօթքներն՝ աղքատի խոնկ: Քիչ մը հեռուն՝ կը անսնէ իր մայրը՝ որ անտարբեր նայուածքներ տալով գերեզմաններուն՝ կը մօտենայ: — « Մայրիկ, կը հարցնէ ազան, մեր հայրիկին գերեզմանը ո՞ր է: — « Ծոփն է անոր գերեզմանը », կը պատասխանէ մայրը: Թշուառ են ուրեմն ասոնք. իրենց թանկագին արտասուքները ալիքներուն պիտի յանձնեն. և ո՛վ գիտէ, պիտի հասցնեն անոնք սրտի այց գահարները՝ իրենց հայրիկին:

Փոքրիկը, կղզւոյն եզրերը սեռայ, երբ գուր կ'ելլէի գերեզմանատունէն. նա կամուրջին յենած, զլուխը կոր՝ կ'արտասուէր, արցունքոտ ծաղիկներն նետելով ծովուն մէջ...

*

Գերեզման, կեանքի՛ ձրմու, կեանքին վերջակէտ՝ գրուած Աստուծոմէ: Վրայ գտնուած գարնինները պիտի չորնան, վարպը պիտի թառամի, զբեզ ոգբացող ուտնուոյն վրայի կանթիցը պիտի շիջանի, արձանները պիտի ջախջախուին, Սիրելին պիտի գաղբի քու շուրջը աղօթքներ մրմնջելէ, և գու նորէն սրբազան պիտի ձեռաս:

Գերեզման, կրօնքի ամենէն մեծ նուէրն եւ. այն Յոյր՝ որ տուաւ Աստուած մարդկութեան, ուսկից. սրբազան պահուեցար Արարչութեան զարբերէն ի վեր. և անկրօն իսկ՝ կրօնքէն սովորեցաւ յարգել զբեզ, սփ հօղակոյտ, որուն համար ոչընչութիւն է հոն:

Աստուած ամենէն գառն պատիժը տուած պիտի ըլլար մարդուն, եթէ զբեզ սրբազանս՝ մեր օրոցքին քով չկնէր. պատիժ մը՝ ուսկից աւելին տալ կարող չէր Ան:

Եւ մէկը կարող է աւելի գառն վրշտ մը ժառանգ թողուլ իր սիրելւոյն, երբ վերջին պահուն, սառ շրթունքն անոր ճակատին քսելով, և լոյսի վերջին շողով աչքերը աչքերուն յառած՝ ըտէ. « Ես ալ չկամ, գերեզման ալ չունենամ » և աչքերը օղտէ . . .

Անոց, անոց որ կը հծծին բնութեան
ու վշտի տակ, այն թշուառին՝ որ Սիրելիէն
կը բաժնուի, ո՞վ է որ միտարանք մը կ'ըլ-
լայ երկրի վրայ, եթէ ոչ կրօնքը, որ Անու-
նորին կը կնքէ այդ սրբազանուած հողա-
կոյտին, և Հասարակ մարդու սրտին վրայ:

Հ. Մ. ՊՈՏՈՒՆՅԱՆ

Ս Ր Ո Վ Ո Ւ Շ Ր Ո Վ *

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Հ Ե Ն Ր Ի Կ Ո Ս Ս Ե Ն Կ Ե Վ Ի Զ Ի

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ա

Երկնքի և երկրի վրայ տեսնուած շատ մը
երեւոյթներ 1647ին ամէն տեսակ ազատից
և արտաքոյ կարգի դէպքերու գուշակ եղան
ժողովրդեան: Ժամանակագիրք կը պատմեն
թէ այն տարին, մանաւանդ պարսնի սկիզ-
բը, մարտիի ամս մը իջաւ վայրենի Գաշ-
տիք ըսուած տեղւոյն վրայ և հունձքի բո-
լոր յայտերն ապականցաւ: Այս շարիքը կա-
րապետ եղաւ թաթարական արշաւանաց .
ասոնցմէ վերջ, ամառը, տեղի ունեցաւ ա-
րեւու խաւարում մը և երկայնագէտ գիտա-
ւորի մը երեւնալը: Քանի մը տեղեւոր, (ինչ-
պէս օրինակի համար, վարչաւորոյ) բնա-
կիչները՝ ամպին վրայ գերեզմանական փոռ
մը և հրեղէն խաչ մը նշմարեցին: Ժողո-
վուրդը՝ այս սպանալից նշաններէն սար-
սափաւար՝ կը սպառէր համաճարակ հիւան-
դութեան մը, որ բոլորովին պիտի ջնջէր

մարդկային ցեղը, անոր համար ինքզինքը
պահոց և աղօթից տուաւ: Ի լրումն ազատից՝
ձեռք, երբէք չտեսնուած բան, մեղով և
անձրեւային եղաւ, դետերը շտապեցան և հա-
լած ձիւներն ալ յորգելով՝ թաղերը որստոն-
ցին և գաշտերն ողողեցին: Ընդարձակ տա-
րածութեամբ՝ արտերը և անապատ գաշտե-
րը անանցանելի ճարձախուտի փոխուեցան .
արեւը՝ հարաւային կողմը՝ աշուպիի ջերմ
ճառագայթներ կը սփռէր՝ որ Պարզաւի գա-
ւառին մէջ, զեկտեմբեր ամսոյ կիսուն, վայ-
րենի Գաշտերուն վրոյ աշտան ցանքերը սկսան
բողբոջիլ: Երկունքի փեթակներու շարք կը
բզզային խմորիին, հօտեր մայելով և բառա-
չելով արածելու կ'իլլէին արօտատեղիները:

Այս ամէնը սովորականէն դուրս էր. ամէն
մարդ արտաքոյ կարգի դէպքերու կը սպա-
ռէր, ամէն ոք սարսափով դէպ ի վայրենի
Գաշտերը կը դարձնէր նայուածքը, ուսկից
կը սպառնայր վտանգը: Անապատ ընդար-
ձակ գաշտերու վրայ տեղի կ'ունենային ա-
վորական կոիւները՝ որոնցմէ միայն արծիւ-
ները, բազնները, ապառնները և վայրի գա-
զանները տեղեկութիւն ունէին: Այն ժամա-
նակ անապատ գաշտն յիշակալն այս էր .
Գաղթականութեանց վերջին հետքերը ճե-
կիւնէն անպին կը լմնային: ապա՝ մինչև
Լիման և մինչև ծովը՝ կը տարածուէր ա-
նապատը, երկու գետերու ընթացից մէջ,
Իրբե ի շրջանակի: Զրոյէժներէն անպին՝ Տնիւ-
բերի անկիւն ձեւացուցած տեղը՝ կ'եռայր
դեռ Ղազախ կեանքը, սակայն անշշակ գաշ-
տին բուն մէջտեղերը բնաւ կենդանութիւն
չկար: Թերեւս հոս հոն եղբրքներու վրայ
տեսնուէին փոքրիկ ագարակներ, իբր ծովու
մէջ կղզեակներ: Այս երկիրը Հասարակապե-
տութեանն էր, սակայն թոյլ տուած էր թա-
թարներուն հոն արածեցնելու իրենց հօտե-
րը. բայց որովհետեւ Ղազախները Հակա-
ռակ կը կենային անոց, ընդարձակ արօ-
տատեղին պատերազմի գաշա մը գարձեր
էր: Թէ քանի քանի կոիւներ հոն մղուած
են և քանի քանի զիակներ ինկած, ոչ ոք
կը հաշուէր կամ կը յիշէր. սակայն երբ որ
կը տեսնային թէ թոշուններու երամենք մի
և նոյն տեղւոյն վրայ թոշտելով դարձագարձ

* Անկէվելէ գլուխգործոց հոշակուած վեպ, որ
Արեւի մէջ սքուած և այժմ գաղարման նմարդուած
հասարակութեան կանուի թարգմանուած էր ընտիր
լեզուով, ոչ միայն իրբե և տարբերական վեպ մը Հան-
դիսի ընթերցողներուն կ'ընծայէր, այլ նաեւ մտառ-
նազարկան և ազգագրական մեծ արժեք ունեցող գրա-
թիւն մը: ԽՐԱՊԱՐ.